

լալի գրականության նկատմամբ Աղաբաբյանի հայտնի սերը և այս եղբայրությունները ոչ մի ազդեցություն չեն ունենում Քենտը չէ Քակունցի շուրջ առաջնային բացել նրա մասշտաբները մեծացնելու համար: Տաղանդավոր գրողը գրա կարիքը չունի: Գրականագետի դեմ են, մանավանդ, նրա բերած օրինակները. «Հյուսիսային ձորի սասողը թերթից» փոխարենությամբ... սոցիալազիական մի ամբողջ տրակտատի է փոխարինում» (էջ 478—479): «Գարեհան ծիծեռնակի պես կոծատ աղերքն» համեմատությամբ... մի կուռ գրամա է, որ բնութագրում է պատերազմի տարիների հայ գլուղի ողբերգությունը» (էջ 477): Այս փոխարենությամբ ինչու համեմատությունները կարելի է համարել լավ, հաջող, բայց ոչ «սոցիալազիական տրակտատի», «կուռ գրամա» համարվելներ և գրանք էլ նախորդ շրջանների գրականություններին ոչ հատուկ նորարարական ենթարկագրեր հաշվել:

Քակունցին «բարձրացնելու», նրա նորարարության համար լալն դաշտ բացելու միտումից առաջ է նաև դատական հայ պատմագիտը (էջ 372—373, 374): Չերկարացնելու համար մեր միտքը հաստատենք մի օրինակով: Չի կարելի չգիտել, գրում է Աղաբաբյանը, որ «Մատվել» և «Գեղորդ Մարգարետունի» վեպերում «նույնպես բարոյախոսական-բարոյական խրնդիրները գերազաս են գեղադիտականից» (էջ 370): Եթե չէ, հայ պատմագիտի երկու կոթողների գաղափարական և գեղադիտական կողմերի աշխարհի հակադրությունը, նշված երկե-

րում բարոյախոսական-բարոյական հարցերը են ներկայացվում են գեղադիտական-գեղարվեստական դմալանքի արժանի միջոցներով:

Արի՞չ գիտություններ նույնպես կարելի է անել: Տեղ-տեղ նկատվում են երկար շեղումներ (էջ 240—245 և այլն), կրկնություններ (էջ 170, 177 և այլն), անհարկի մեղքերումներ՝ առարկության տեղի շարժող կարծիքներ հաստատելու համար, թերություններ ազդուրները նշելիս և այլն: Քերես կարելի է հեղինակին նաև խորհուրդ տալ իր հյուսիսային պատկերավոր լեզվից դուրս վանել միայն մեծ գեղեցիկ հեղուկ մի քանի ուներ ու նախադասություններ:

Ամփոփենք: Գրականագետ Մոսին Աղաբաբյանը ստեղծել է մեծ ու ինքնատիպ գրողին արժանի մեկնադրություն, որը ամենից ծավալունն ու հանդամանալիցն է սովետահայ գրողների մասին մինչև այժմ բոլոր գրվածներից: Նշխատության մեջ գրանցվել են գրական երկր գաղափարական ու գեղադիտական վերլուծության ենթարկելու հեղինակի հմտությունն ու բարձր ճաշակը: Գրողի նկատմամբ անհուն սիրով և տարիների ծանր աշխատանքով ստեղծված է բոտ ամենայնի արժեքավոր մի ուսումնասիրություն, որը սովետահայ գրականագիտության նվաճումներից է:

Վ. ՊԱՐՏԻՉԱՆՈՒՆ

Բանասիրական գիտությունների
գոկտոր-պրոֆեսոր

Ա. Թ. ԹՈՎԱՍՅԱՆ. Հին և վ միջնադարյան հայ քրեական իրավունք: Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն, 1962, 659 էջ:

Հայտնի է, որ հայկական իրավունքի շուրջ եղած առանց այն էլ աղբառ գրականությունը վերաբերում է, որպես կանոն, հայկական իրավունքի հուշարձանների հետ կապված հարցերին, այսինքն այդ գրականությունը ա՛նչև շուտ ներկայացնում է հուշարձանները, քան տեսական-համակարգված վերլուծության ենթարկում ժամանակի գրական իրավունքի: Բաղադրություն են կազմում «Կարստի» «Grundriß»-ը, որը հայկական իրավունքի պատմության մի համառոտ ա՛նարկ է և ն. Սամուելյանի երկ ու աշխատությունները, որոնցից մեկը նվիրված է հայկական պետական իրավունքին, իսկ մյուսը՝ քաղաքացիական, իսկ հայկական քրեական իրավունքի շուրջ եղած գրականությունը սպառվում է 5—6 թերթով (Կարստ, Կոլեր): Ինչպես

տեսնում ենք, հայկական քրեական իրավունքի բնագավառը բացառապես խոսքն է: Ահա այդ խոսքերը բարձրացնելու պատվարներ ու միաժամանակ խիստ ծանր աշխատանքն է վերցրել իր վրա դոցենտ Ա. Թովմասյանը: Նրա «Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք» աշխատության առաջին մասը, որը կազմում է ծավալուն մի հատոր, նվիրված է քրեական իրավունքի արմատական հաստատություններից երկուսի՝ հանցագործության և պատժի հետ առնչվող հարցերի քննությանը, այսինքն ընդգրկում է քրեական իրավունքի միայն ընդհանուր մասը:

Գրախոսվող գիրքը կազմված է ներածությունից և հետևալ երեք մեծ բաժիններից.

Ա. Հին և միջնադարյան հայ քրեական իրավունքի աղբյուրները:

Բ. Հանցագործությունը և հանցագործը:

Դ. Պատիժը և նրա կիրառումը:

Յուրաքանչյուր բաժին իր հերթին բաղկացած է գլուխներից ու ենթագլուխներից, որոնք նվիրված են քրեական իրավունքի ընդհանուր մասի առանձին հաստատություններին, սկզբունքներին ու հասկացողություններին և բացահայտում են դրանց բովանդակությունն ու դասակարգային էությունը:

Պատմա-իրավական նյութը քննելով պետության և իրավունքի մասին մարքս-լենինյան ուսմունքի լույսի տակ, հեղինակը ցույց է տրվել, և գալարմիր թևի նման անցնում է ամբողջ աշխատության միջով, որ հին և միջնադարյան հայկական քրեական իրավունքը, ինչպես և քրեական իրավունքն առհասարակ, հագեցված է որոշակի դասակարգային բովանդակությամբ: Փաստական առատ տվյալներով նա ապացուցում է, որ հայկական քրեական իրավունքը այն հուժկու դեմքերից մեկն էր, որով տիրապետող դասակարգը ապահովում էր իր կեցության պայմանները աշխատավոր զանգվածների ոտնձգություններից: Քրեական իրավունքի առօրյա իրացման ժամանակ այդ ճշմարտությունն իր ապացուցն է գտնում աղատի և շինականի նկատմամբ կիրառվող պատժատեսակի և պատժաչափի պարզ խտրականության մեջ: Իսկ արտակարգ դեպքերում՝ աշխատավոր ժողովրդի հուզումների ժամանակ, դա արտահայտվում էր այն դաժան պատժատեսակներով, որոնց ենթարկվում էին շարժման մասնակիցները:

Աշխատության մեջ ցույց է տրված ինչպես հանցագործության գոյությունը և տարածվածությունը միջնադարյան Հայաստանում, այնպես էլ դրա պատճառները: Այդ պատճառներից գլխավորները հեղինակը իրավացիորեն համարում է երկուսը՝ շահագործողական կարգերը և օտար սիրապետությունը:

Ուսումնասիրության մեծագույն մասը նվիրված է միջնադարյան հայկական քրեական իրավունքի այն նորմերի գիտա-իրավաբանական վերլուծությանը, որոնք արտահայտում են այդ իրավունքի ընդհանուր մասի հաստատությունները, հասկացություններն ու սկզբունքները: Միջնադարյան նյութի հիման վրա տրված է հանցագործության իրավաբանական սահմանումը, բնութագրված է հանցագործության սուբյեկտը և այդ կապակցությամբ քննված են մեղսունակության և անժողովունակության հարցերը, իսկ այս վերջինի հետ կապված՝ հարրած վիճակում հանցագործություն կատարելու խնդիրը:

Հանգամանորեն քննված է հանցակազմի սուբյեկտիվ կողմը՝ մեղքը իր տեսականերով (խառը մեղք, դիտավորություն, անզգուշություն), ինչպես նաև հարկաւրանքի (ֆիզիկական և հոգեկան) և անհաղթահարելի ուժի հասկացությունը և դրանց քրեա-իրավական նշանակությունը:

Հատուկ գլուխներում լուսարանված են հանցակազմի օրենքի, օրենքի կողմի և պատճառական կապի հետ առնչվող հարցերը, արարքի վտանգավորությունը բացառող հանգամանքները: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել հետևյալ ուշադրավ իրողությունը. հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տվել, որ միջնադարյան հայկական քրեական իրավունքում գործել են անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության հաստատությունները:

Ճանաչական հանցավոր գործունեություն և ճանցակցություն և առնչակցություն՝ դրուխներում վերլուծված են տվյալ հասկացությունների հետ կապված հարցերը: Համոզիչ փաստերով հեղինակը ցույց է տվել, որ միջնադարյան հայկական քրեական իրավունքում իրենց կայուն արտահայտություններն են գտել ժամանակակից քրեական իրավունքի առաջին հասկացություններ, ինչպես նախապատրաստություն, հանցափորձ, հանցակցություն, կատարող, դրոգիչ, օժանդակող և այլն:

Աշխատության մեջ քննված հարցերի սոսկ թվարկումն արդեն բերում է շատ ուշադրավ մի նորակայության, որ թեև չի արել հեղինակը, բայց բխում է ինքնին: Միջնադարյան հայկական քրեական իրավունքին քաջ ծանոթ են քրեական իրավունքի ընդհանուր մասի համարյա բոլոր հաստատությունները, սկզբունքներն ու հասկացությունները:

Աշխատության վերջին բաժնում հեղինակը տալիս է պատժի հասկացությունը, խոսում է պատժի ծագման, խնդիրների ու նպատակների, պատժասխտեմի ու պատժատեսակների մասին և դասակարգում միջնադարյան Հայաստանում կիրառվող պատիժները:

ա) մահապատիժ (իր ձևերով):

բ) մարմնական և անվանարկող պատիժներ:

գ) աղատությունից զրկող կամ այն սահմանավակող պատիժներ:

դ) գուլքալին պատիժներ:

ե) եկեղեցական-կանոնական պատիժներ:

Բաժինը վերջանում է ապաստանի և ներման իրավունքներին նվիրված գլուխներով: Աշխատությունն ունի ոոսերեն և դերմաներեն ամփոփումներ և հատուկ անունների ցանկ:

Գրախոսվող աշխատությունը դրված է բացառապես սկզբնաղբյուրների հիման վրա: Նրա-

նում լայնորեն օգտագործված են ոչ միայն իրավաբան հուշարձանները, որ ինքնուրույն հասկանալի է, այլև հարցին վերաբերող համարյա բոլոր այն փաստերն ու տեղեկությունները, որ հաղորդում են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի մատենագիրները, նաև վիճական արձանագրությունները: Բայց հեղինակը չի բավարարել այդքանով: Միջնադարյան հայկական քրեական իրավունքի ընդհանուր մասի հաստատությունները քննվում են ոչ թե որպես ինքնապարզ, այլ հիմնականում, ալ համադրվելով տարածությամբ ու ժամանակով թե՛ մոտ, թե՛ հեռավոր ժողովուրդների համապատասխան հաստատությունների հետ: Համեմատությունների շրջանակն ընդգրկում է Մերձավոր Արևելքի ու Սևրոսյայի հին և միջնադարյան հիմնական օրենսդրությունը սկսած Համուրաբի օրենսգրքից մինչև ռուսական Պրավդան (չորս հազար տարվա օրենսդրական նյութ): Հեղինակը համեմատության նյութ է քաղել նաև հին աշխարհի այնպիսի խոշոր հուշարձաններից, ինչպիսիք են Մանավադհարմաշաստրան և Արթաշատրան:

Հայկական և օտարազգի քրեական իրավունքի հաստատությունների համեմատությունը, սակայն, պարզ համադրություն չէ՝ արձանագրելու համար միայն համանման հաստատությունների առկաությունը և կամ դրանց հարատևումը հազարամյակների ընթացքում: Համեմատական այդ ղուդահեղությունը շահեկան են հենց նրանով, որ քննական-վերլուծական են: Հետադոտությունն նման եղանակը լայն հնարավորություն է տվել հեղինակին ոչ միայն դիտելու ուսումնասիրվող իրավական հաստատությունների զարգացումը ժամանակի ընթացքում, ոչ միայն ընդգծելու այն ընդհանուրը, որ հատուկ է դրանք, որպես դասակարգային երևույթների, այլև ցույց տալու այն տարբերությունները, որոնք կրում են տվյալ ժողովրդի հոգեվոր ու նյութական կեցության պայմանների ամրոգչության կնիքը:

Գրախոսվող աշխատության մեջ քննարկված խնդիրները մեծ մասամբ չիլի են լուծված, պատմական դեմքերն ու դեպքերը ստացել են օրյեկտիվ գնահատական: Խոսքը ոչ միայն հեղինակի կողմից առաջին անգամ զրկող հարցերի մասին է, այլև այն հարցերի, որոնք նախկինում քննության առարկա են եղել: Բայց, այնուամենայնիվ, չի կարելի չնշել, որ հայկական իրականության որոշ փաստեր, երևույթներ քրեադատելիս հեղինակը երբեմն ավելի համարձակ է, քան բժախնդիր:

Պատմական դեմքերն ու նրանց գրական վաստակը արժեքավորելիս հեղինակը ելնում է այն հանգամանքից, թե ինչքանով ճիշտ են ար-

տահայտել ժամանակի պահանջները: Իրավացի է հեղինակը, երբ մերժում է Չամչյանի և մյուսների տեսակետը Ալավիկի որդի Դավթի և նրա կանոնների մասին, նշելով, որ «երևույթները գնահատելիս անհրաժեշտ է ելնել դրանք պայմանավորող տնտեսական և հասարակական-քաղաքական իրադրությունից», ուստի «այդ կուլտուր-պատմական հուշարձանը լուրջ հետաքրքրություն և պատմական-իրավական որոշակի արժեք ներկայացնող փաստաթուղթ է» (էջ 119):

Նույն չափանիշով է մոտենում հեղինակը նաև Մխիթար Գոշին և նրա Դատաստանագրքին, որին նվիրել է ծավալուն մի ենթագլուխ: Դատաստանագիրքը մեծ դեր է կատարել հայ ժողովրդի կյանքում թե՛ բուն երկրում, թե՛ օտար երկրի տակ: Դատաստանագիրքը, ինչպես տեղին ընդգծում է հեղինակը, «հայտնի առումով իր մեջ պարունակում է պրոգրեսիվ հայացքների ու դատողությունների մի ամբողջ սիստեմ» (էջ 129) ու «մոնումենտալ և լիովին ինքնուրույն մի դործ է. մոնումենտալ է, որովհետև ամբողջ միջնադարում, ընդհուպ մինչև XII դարը ներառյալ, ոչ միայն Հայաստանում, այլև Նվրոպայում նման բազմակողմանի ու բովանդակով թյամբ հարուստ, իրավունքի բոլոր բնագավառներին վերաբերող իրավանորմեր պարունակող դատաստանագիրք չի եղել. ինքնուրույն է, որովհետև Գոշին հաջողվել է համարյա ամբողջությամբ ի մի հավաքել և մի տեսակ կոդիֆիկացիայի ենթարկել, միմյանց հետ համաձայնեցնել այն բոլոր իրավանորմերն ու կանոնները, որոնք կիրառվում էին այն ժամանակվա Հայաստանի իրականության պայմաններում...» (էջ 128—129):

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի շուրջը վերջերս ծավալված բանավեճի նկատմամբ հեղինակի դիրքը ավանդական է: Այս ենթագլխում հատկապես պետք է նշել հեղինակի կատարած այն գեղեցիկ վերլուծությունը, որը վերաբերում է Կիլիկիայում դատավառությունը պատկերող հայտնի նկարին:

Իր ակնհայտ առավելություններով հանդերձ աշխատությունը, այնուամենայնիվ, դերծ չէ ոչ ճիշտ գրություններից, վիճելի տեսակետներից և այլ թերթություններից:

Աշխատության հեղինակն իրեն հատուկ բժախնդրությամբ չէ, որ դործածել է հրավարտակ և օրենք, օրենսդիրք և օրենսդրություն հասկացությունները և, թերևս այդ է պատճառը, որ միևնույն հարցի մասին նրա խոսքը հակասաբան է: Եթե կարելի է համաձայնել կամ առայժմ չառարկել հեղինակի այն դրույթին, ըստ որի հին Հայաստանում չեն եղել ազդայի դատաստանագրքեր, ապա բոլորովին անընդունելի է նրա մյուս պնդումը, ըստ

որի հին Հայաստանում չի եղել նաև պետական օրենսդրությունը Ա. Թվմասանը գրում է. «Ընդհանուր է, հայ մի քանի պատմագիրների աշխատություններում կան առանձին հետաքրքիր ասույթներ ու դրոյշներ, որոնցից կարծես թե երևում է, որ հին Հայաստանում եղել է պետական օրենսդրություն, որ հայ թագավորները հրատարակել են պետական օրենքներ Բայց դրանք, այդ մտքերն ու դրույթները, ինքնուրույնության վերջրած կամ իրենց ամբողջության մեջ, խիստ անբավարար ապացույցներ են այդ բանի: Այս առումով սխալվում են բոլոր նրանք, ովքեր հենվելով Մովսես Խորենացու՝ հայոց Վաղարշակ թագավորի բարենորոգումների մասին արած դատողությունների վրա, ապացուցված են համարում, որ իբրև թե հին հայերը ունեցել են իրենց զբաղվող պետական օրենսդրությունը (19)»: Մինչևեռ Խորենացուց մեջ բերելով հայտնի հատվածը Վաղարշակի մասին, հեղինակն աշխատում է. «Ինչպես պարզ կերպով երևում է, Վաղարշակի զործունեությունն արտահայտվել է ոչ թե պետական օրենսդրության ստեղծման, այլ արքունիքում կարգ ու կանոնի հաստատման, զորքի ղեկավարության բարելավման, արդարադատության իրականացման ֆունկցիան իր ձեռքում էկենտրոնացված լինելու փաստի ազդարարման, քաղաքացիների և գյուղացիների միջև գոյություն ունեցող լարվածության մեղմացման և նման այլ քայլերի մեջ: Վաղարշակ թագավորի այդ զործունեությունը դրսևորվել է առնչաբար մի քանի ընթացիկ ընդլայնվող հրովարտական հրատարակմամբ և ուրիշ ոչինչ, իսկ ազգային հրովարտական հրապարակումը դեռևս պետական օրենսդրական զործունեություն չէ, չի տալիս այնպես, ինչպես որ նման հրովարտականներն էլ դեռևս պետական օրենքներ չեն՝ այս բառի լայնածավալ և իսկական իմաստով: Դրանք նորմատիվ ակտեր չեն» (19) 110)։

Այսպես, ուրեմն, Խորենացին ասում է, որ Վաղարշակը օրենքներ հաստատեց (օրենս իմն հաստատել), իսկ Ա. Թվմասանը պնդում է, որ դրանք օրենքներ չ'իմնում: Որովհետև հեղինակը, նախ, ենթադրում է, որ բրանք հրովարտականներ լինելուց առաջինը Դրանով հեղինակը ոչինչ չի ապացուցում, կամ ապացուցում է իր ասածին ուղիղ հակառակ մի բան: սա գտնում է, որ հին Հայաստանում զբաղվող օրենսդրություն չի եղել, մինչդեռ վերոբերյալ լույսի ճիշտ վերաբերմանը գրությունը, որ ընդունում է նաև ինքը՝ հեղինակը, ուղղակի ապացույց է այն բանի, որ օրենսդրությունը զբաղվող էր: Բացի դրանից, այն ժամանակ հրովարտակր (որոշակի տեսակները) օրենքի արտաքին արտահայտման ձևերից մեկն էր, օրենս-

դրի կամքի դրսևորման արտաքին հանդերձանքը: Հեղինակը գտնում է, որ Վաղարշակի այդ «հրովարտականները» ընթացիկ ընդլայնվում են կրում և այդ պատճառով էլ պետական օրենքներ չ'իմնում: Նշելով, որ բոլոր օրենքներն էլ ընթացիկ ընդլայնվում են կրում, հավիտենական օրենքներ չ'կան, բոլոր օրենքներն էլ ընդունվում են ընթացիկ կարիքներից ելնելով, ընթացիկ հարցերը կարգավորելու համար: Վերջապես քիչ հետո կտեսնենք, որ ընդհանուր չէ նաև հեղինակի այն պնդումը, թե Վաղարշակի այդ «հրովարտականները» «նորմատիվ ակտեր չ'իմնում», այդ պատճառով էլ օրենքներ չ'իմնում: Հեղինակի դատողությունները Վաղարշակի «հրովարտականների» շուրջ, թերևս, ճիշտ կլինեն, եթե ազգային հրովարտականները ուղղված լինեին մասնավոր անհատների, հատկապես նրանց հետ կապված հարցեր լուծելին և լինեին սոսկ զոյություն ունեցող առկա կամ այն օրենքը կամ սովորության որևէ նորմ իրացնելու քայլեր միայն: Սինդիկո ինքը՝ հեղինակը ևս չի մխտում, որ այդ «հրովարտականները» վերաբերում էին հասարակության լայն խավերին՝ սկսած արքունիքից մինչև գեղջուկներն ու քաղաքացիները: Այդ «հրովարտականները» սահմանվում էին նոր իրավահարաբերություններ կամ նոր ձևով էին կարգավորվում առկա իրավահարաբերությունները պետական կյանքի որոշակի բնագավառներում (արքունիքում, բանակում, արդարադատության իրականացման զործում և այլն): Հետևապես Վաղարշակի «հրովարտականները» պետական օրենքներ էին առաջինը ընդարձակ և իսկական իմաստով, որովհետև դրանք տարածվում էին առողջ պետության վրա, վերաբերում էին պետության համարյա բոլոր հասարակական խավերին և բխում էին օրենսդիր բարձրագույն մարմնից: Ամենից տարօրինակը, սակայն, հեղինակի այն համոզմունքն է, թե պետական օրենսդրության ստեղծումը և օրենքների հրապարակմամբ պետական կյանքի այս կամ այն ընդգամառող կարգավորելու տարրեր բաներ են: Ինչ հիմնով չ'իմնում հեղինակը պետական օրենսդրություն չ'ի համարում, օրինակ, Պապի հատնի օրենքները հոգևորականների հոգևոր զգալի բաժինը պետականացնելու մասին: Կամ՝ մի թե կարելի է պետական օրենսդրությունից դուրս թողնել, օրինակ, Շահապիվանի ժողովի որոշումները ընդունված օրենսդիր ժողովի կողմից: Գուրև հեղինակի պատճառաբանությունն այս դեպքում այն է, որ «բարձեալ» էր թագավորությունն հատուկ Բայց հեղինակը երևի անորոշադրության է մատնել այն փաստը, որ «ի նախադրարս հայոց առկա էր թագավորություն» (նդիշ)։

Աշխատության 110—112 էջերում ժխտելով հին Հայաստանում օրենսդրության գոյությունը և Վաղարշակի գործունեության օրենսդրական բնույթը, 206—208 էջերում հեղինակը ստիպված է ընդունելու հակառակը՝ նկատի ունենալով Վաղարշակի գործունեությունը, Ա. Թովմասյանը գրում է. «Մեր կարծիքով, սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ օրենսդրական գործունեություն։ Իսկ 206 էջում գրում է. «Հայ պատմագիրների հաղորդումներից երևում է, որ հին Հայաստանում թագավորները զբաղվել են նաև որոշ օրենսդրական գործունեությամբ... Բայց որ հայ թագավորների օրոք հրատարակվել են առանձին, որոշակի հարցերի վերաբերող օրենքներ... դա կասկածից դուրս է։ Հին Հայաստանում օրենսդրության գոյությունը ժխտելու կամ այդ կապակցությամբ հակասական մտքեր արտահայտելու պատճառն այն է, որ հեղինակը, ինչպես ասվեց, անհրաժեշտ չափով բծախնդիր չէ օրենսդրություն և օրենսգիրք հասկացությունները գործածելիս։ Նա կարծում է, որ եթե չի եղել օրենսգիրք, ապա չի եղել նաև օրենսդրություն։

Առարկելի է նաև հեղինակի դրույթը Հայաստանի պետական կարգի մասին Արշակունիների շրջանում։ Նա գրում է. «Թագավորներն անսահմանափակ էին իրենց իրավունքներում... Նրանք հողասեփականատիրական իրավունքի բացարձակ սուբյեկտներ էին և անարգել կերպով տնօրինում էին իրենց այդ սեփականությունը, վաճառում, նվիրում կամ կտակում էին հողային տարածությունները։ Հանդես գալով որպես բացարձակ հողասեփականատերեր՝ բովանդակ երկրի մասշտաբով, դրանով իսկ նրանք իրենց զրուցում էին որպես անսահմանափակ քաղաքական իշխանություն ունեցող բռնակալներ։ Նրանց այդ բացարձակ քաղաքական իշխանությունը բխում էր բացարձակ հողասեփականատիրություն իրենց իրավունքից» (էջ 178), կամ «Արշակունյաց թագավորությունն, օրինակ, բացարձակ միապետություն էր» (էջ 206, տե՛ս նաև էջ 112, 492 և այլուր)։ Հայտնի է, որ տվյալ հարցը իր կարևորությունը արժանի ուշադրության չի արժանացել և, թերևս, այդ է սխալմամբ, որ այն ցարդ վիճելի է։ Նման դեպքում հեղինակը կամ պետք է հանգամանորեն փաստարկեր իր տեսակետը, կամ հրաժարվեր վիճելի դրույթը ելակետ դարձնելուց։ Ա. Թովմասյանը, ինչպես և պրոֆ. ի. Սամուելյանը, ժայռահեղության մեջ են ընկնում, երբ Արշակունի թագավորներին հայտարարում են «հողասեփականատիրական իրավունքի բացարձակ սուբյեկտներ»։ Իրականում թագավորը «հողասեփականատիրական իրավունքի բացարձակ սուբյեկտ» էր միայն ուստանում, իսկ դրա-

նից դուրս նրա այդ իրավունքը անվանական էր։ Ուստանից դուրս թագավորի հողային իրավունքները ծավալվում էին ոչ թե սեփականատիրական հարաբերությունների ուղիղությամբ, այլ կապված էին այդ հողի վրա հանրաճին բարձրագույն իշխանությունն իրականացնելու հարցերի հետ։ Նրկու դեպքում էլ ամբողջ երկրի ծավալով թագավորի իշխանության բացարձակությունը ուղիղ համեմատական էր նախարարների հանդեպ նրա ուժի բացարձակ գերակշռությանը։ Բայց այս դեպքում էլ թագավորը չէր կարող կամայականորեն տնօրինել նախարարների հողային տիրույթները։ Արշակունիները ոչ թե բացարձակ միապետներ էին, այլ ձգտում էին դրան և այդ պայքարում էլ սպառվեցին։

Հեղինակը հայկական իրավունքի աղբյուր է համարում նաև մուսուլմանական իրավունքը։ Այդպիսի անվերապահ պնդումը, անշուշտ, էիշտ չէ։ Ա. Թովմասյանը գրում է. «Մեզ հայտնի չէ մենագրական կարգի որևէ առանձին աշխատություն կամ նույնիսկ առանձին հոդված, որի մեջ այս հարցը համակողմանի կերպով քննված լիներ։ Բայց... հայ միջնադարյան քրեական իրավունքի համար մուսուլմանական իրավունքը որպես աղբյուր ծառայելը հանրաճանաչ փաստ է» (էջ 92)։ Իրոք որ դա փաստ է, բայց ոչ թե իրականության, այլ հանրաճանաչության ուժով, այսինքն՝ փաստը երևույթի հանրաճանաչությունն է և ոչ հանրաճանաչ երևույթի։ Կասկածելով հանդերձ, հեղինակը լուրջալիս ընդունել է «հանրաճանաչ փաստը», փոխանակ ըստ էության ուսումնասիրելու այն, որը ինքնին շատ արժեքավոր ներգրում կլիներ հայագիտության մեջ։

Մի գիտողություն ես։ Հեղինակը իրավագիտորեն նշում է, որ սկզբում քրեական իրավունքում իշխել է օբյեկտիվ մեղսայնացման սկզբունքը։ Դա ունենալով թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ պատճառներ, որոնցից միայն վերջինների վրա է կանգ առնում հեղինակը (էջ 243)։ Մինչդեռ, նախ պետք է բացատրվեն օբյեկտիվ մեղսայնացման գոյության օբյեկտիվ պատճառները։ Դա անհրաժեշտ էր ոչ միայն նրա համար, որպեսզի համակողմանի ու ամբողջական լինեն հարցի քննությունը, այլև նրա համար, որպեսզի հասկանալի լինեն տվյալ երևույթի հետագա զարգացումը։ Որովհետև, երբ հեղինակը գրում է թե՛ «Ժամանակի ընթացքում, սակայն, տիրապետող դասակարգերի շահերը թելադրում են, որ օբյեկտիվ մեղսայնացումը փոխարինվի սուբյեկտիվ մեղսայնությամբ» (էջ 275—276), այնուամենայնիվ անհասկանալի է մնում, չի բացատրվում, թե ինչով էր գաձեռնառու տիրապետող դասակարգին, և կամ ին-

չո՞ւ սկզբում ձեռնտու էր օրյեկտիվ մեղսայնացումը, հետո՝ սուրյեկտիվը:

Հեղինակը գտնում է, որ «օրյեկտիվ մեղսայնացման սկզբունքն իրեն զգացնել է տվել նաև հին հայերի մոտ... Բոլոր տվյալները կան ենթադրելու, որ հայ սովորության քրեական իրավունքի հիմքում նույնպես ընկած է եղել այդ սկզբունքը» (էջ 274): Եվ որպես մեկը այդ «բոլոր տվյալներից», որը «փայլուն կերպով ապացուցում է օրյեկտիվ մեղսայնացման սկզբունքի երբևէ տիրապետությունը պատմական Հայաստանում», հեղինակը վկայակոչում է այն փաստը, որ «հին հայ նախարարական ու իշխանական տոհմերն իրենց եղբայրասպան կոիվներում միմյանց բնաջնջելիս շատ հաճախ միմյանցից չէին տարբերում մեղավորներին ու անմեղներին» (էջ 275): Հայտնի է, որ գուգահեռները չեն հատվում, սակայն դա ապացուցիչ նշանակություն ունի, եթե խոսքը միևնույն հարթության ուղիղների մասին է: Տարբեր հարթություններում տարված գուգահեռները կարող են հատվել, բայց դա այլևս ապացուցիչ նշանակություն չունի: Նախարարական տոհմերի բնաջնջումները գուտ քաղաքական ակտեր էին և զրանցով չի կարելի ապացուցել իրավական որևէ հաստատության կամ սկզբունքի գոյություն: Դրանք առանձին գործողություններն էին քաղաքական այն մեծ ողբերգության, որի հերոսներն էին ոչ թե իրավական սկզբունքներն ու օրինականությունը, այլ սուրն ու անօրինականությունը: Հեղինակն այնքան է հեռու գրնում, որ օրյեկտիվ մեղսայնացման «որոշակի հետքեր» է գտնում Մխիթար Գոշի (համապատասխանաբար նաև Սմբատ Սպարապետի) Դատաստանադրքում: Մխիթար Գոշի 'Իստաստանադրքի երկրորդ մասի 34-րդ հոդվածը (և Սմբատ Սպարապետի Դատաստանադրքի 123-րդ հոդվածը), որ վկայակոչում է հեղինակը, նման հետևության հիմքեր չի տալիս: Ինչո՞ւ հորի տերը պատժվում է միայն նրա համար, որ հորը բաց է թողել: Բայց հոդվածի բովանդակությունից ակնհայտ է, որ ըստ օրենսդրի՝ հորի տերը պարտավոր էր թե՛ դիտակցել և թե՛ նախատեսել, որ նման դեպքում կարող են առաջանալ վնասակար հետևանքներ: Հետևապես հարցը լուծվում է ոչ թե օրյեկտիվ, այլ սուրյեկտիվ մեղսայնացման սկզբունքով: Թվում է, հեղինակը ձգտել է անպայման ցույց տալ օրյեկտիվ մեղսայնացման գոյությունը հին Հայաստանում: Դա հաստատվում է նրանով, որ մի քանի էջ հետո նա արձանագրել է. «Վերահիշյալ փաստերը ամբողջությամբ վերցրած, լիակատար հիմքեր են տալիս ասելու, որ հին և միջնադարյան Հայաստանում իշխել և ընդհանրապես ճանաչում է գտել մարդկանց պա-

տասխանատվության կանչելու սուրյեկտիվ մեղսայնության սկզբունքը» (էջ 282):

Լեռնասարակ պետք է ասել, որ հայկական քրեական իրավունքի հաստատությունների, սկզբունքների հին, նախադրային շրջանի մասին հեղինակի խոսքը նվազ փաստարկված է, ավելի ճիշտ՝ այդ շրջանի մասին ընդհանուր զրականությունից հայտնի պատկերացումները տարածված են նաև Հայաստանի վրա: Հասկանալի է, որա պատճառը փաստերի սակավությունն է կամ ուղղակի բացակայությունը, մի հանգամանք, որ խոսք ասելիս պահանջում է ավելի շատ և ավելի շուտ վերապահումներ, քան ավարտուն պատկերներ:

Ինչխատությունը գերծ չէ նաև փաստական անճշտություններից, ոչ ճիշտ արտահայտություններից և պարզապես վրիպակներից: Բերենք այդ կարգի մի քանի օրինակ. «Ռուրենը 1080 թ. Կիլիկիան հայտարարում է որպես հայկական անկախ պետություն և դառնում ստեղծած քաղաքական զանակալ» (էջ 97): Հայտնի է, որ Ռուրենը դահակալ չէր. Կիլիկիան «պետությունը... տապալվեց 1365 թ.» (էջ 150): Ոչ թե 1365 թ., այլ 1375 թ.: Ըստ հեղինակի՝ Սիդիգմունդը լեհահայոց դատաստանադիրքը հաստատել է 1569 թ. (էջ 145), մինչդեռ դա կատարվել է 1519 թ.: «Անհրաժեշտ է, որ իրավունքի ռեցեպցիա կատարող երկրում լինեն այնպիսի տնտեսական և հասարակական-քաղաքական հարաբերություններ, որոնք ամբողջությամբ կամ մեծ մասամբ գոյություն ունենան այնտեղ, որտեղ իրավունքը ռեցեպցիայի է ենթարկվում» (էջ 77): Պետք է լինեն «...այնտեղ, որտեղից իրավունքը...»: Հայկական իրավունքի աղբյուրների շարքում հեղինակը նշում է վիմագիր տաբեզրե (էջ 39): Հայտնի է, որ հայերեն վիմագիր տաբեզրեր չկան, կան վիմական արձանագրություններ: Ինչխատության 494-րդ էջում հեղինակը գրում է. «Գրիգոր Մադիստրոսի ձեռքով կիրառվող դատական ու արտադրական ահաբեկող ռեպրեսիաները...»: Իկնհայտ է, որ պետք է լինեն «...դատական ու արտադրական...» և այլն: Եթե աշխատության խմբագիրներն ու սրբագրիչներն ավելի ուշադիր վերաբերմունք ցուցաբերեին, մանավանդ, նկատի ունենալով, որ նման մի գործ հայերեն լեզվով առհասարակ առաջին անգամ է հրկան գալիս, նշված թերությունների մեծ մասը, անշուշտ, չէր լինի:

Գրախոսվող աշխատությունը արժեքավոր ուսումնասիրություն է ոչ միայն հայագիտության (հայ իրավունքի պատմության), այլև ընդհանրապես իրավունքի պատմության բնագավառում:

Խ. ԹՈՐՈՍՅԱՆ